ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

ի պատասխան Ձեր 18.12.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ կառավարության 28. 09. 2017 թվականի թիվ 1210-Ն որոշման դրույթներով ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության կողմից ամենամյա պարբերականությամբ, որոշմամբ սահմանված հավելվածով տրամադրվող տեղեկություններում արտացոլվում է փոխադրամիջոցիների գրանցման ամսաթիվը, իսկ տրանսպորտային միջոցների ներմուծված լինելու և (կամ) ՀՀ այլ համայնքներից Երևան համայնք հաշվառված լինելու հիմքերի վերաբերյալ տեղեկատվություն լիազոր մարմնի կողմից հաշվառող մարմնին չի տրամադրվում, հետևաբար այն տարանջատել և տրամադրել տեղեկատվություն հնարավոր չէ:

Տեղեկացվում է նաև, որ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ տրամադրված տեղեկությունների համաձայն, 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Երևան համայնքում հաշվառված տրանսպորտային միջոցների քանակը կազմում է 342.119, իսկ դրանցից հնարավոր չէ տարանջատել որքանն է փաստացի շահագործվում Երևան քաղաքում:

Հաշվի առնելով, որ թե՛ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառող մարմնին տրամադրվող և թե՛ փոխգործելիության հարթակի միջոցով տրամադրվող տեղեկություններից հնարավոր չէ տարանջատել միայն ներմուծված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը, հետևաբար տեղեկացվում է, որ Երևան համայնքի բյուջե որպես փոխադրամիջոցի գույքահարկ (արտահայտված հազար դրամով) փաստացի մուտքագրվել է 2023 թվականին՝ 12,3 մլրդ ՀՀ դրամ, 2024 թվականին՝ 12.7 մլրդ ՀՀ դրամ և 2025 թվականի դեկտեմբերի 22- ի դրությամբ՝ 13.5 մլրդ ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ